ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017թ. մայիսի 10-ից 13-ը քաղաք Մադրիդ (Իսպանիայի Թագավորություն) գործուղելու մասին

1. **Անուն, ազգանունը՝**

Մեխակ Ապրեսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահի առաջին տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

Քաղաք Մադրիդ (Իսպանիայի Թագավորություն), 2017թ. մայիսի 10-ից 13-ը:

4. **Գործուղման նպատակը՝**

ՄԱԿ Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (ՄԱԿ ԶՀԿ) Գործադիր խորհրդի (ԳԽ) 105-րդ նստաշրջանին մասնակցություն:

5. **Քննարկված թեմաները՝**

Այցի ընթացքում քննարկվեցին հետևյալ հարցերը.

- ՄԱԿ ԶՀԿ Գլխավոր քարտուղարի թեկնածուի ընտրություն ՄԱԿ ԶՀԿ Գլխավոր ասամբլեայի հաստատմանը ներկայացնելու նպատակով,
- զբոսաշրջություն և անվտանգություն,
- քաղաքային զբոսաշրջության կայուն զարգացում:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

Այցի ընթացքում տեղի ունեցան հանդիպումներ.

- ՄԱԿ ԶՀԿ Գլխավոր քարտուղար Թալեբ Ռիֆաիի հետ,
- ՄԱԿ ԶՀԿ գործադիր տնօրեններ Կառլոս Վոգելերի և Զոլտան Շոմոգիի հետ,

- ՄԱԿ ԶՀԿ Եվրոպայի տարածաշրջանի հարցերով պատասխանատու Իզաբել Գարանիայի հետ,
- ՄԱԿ ԶՀԿ Գլխավոր քարտուղարի Բրազիլիայի կառավարության կողմից առաջադրված թեկնածու պարոն Մարսիո Ֆավիլայի հետ,
- ՄԱԿ ԶՀԿ Գլխավոր քարտուղարի Կոլումբիայի կառավարության կողմից առաջադրված թեկնածու պարոն Հայմե Ալբերտո Կաբալի հետ,
- ՄԱԿ ԶՀԿ Գլխավոր քարտուղարի Վրաստանի կառավարության կողմից առաջադրված թեկնածու պարոն Զուրաբ Պոլոլիկաշվիլիի հետ,
- ՄԱԿ ԶՀԿ Գլխավոր քարտուղարի Կորեայի կառավարության կողմից առաջադրված թեկնածու տիկին Յոնգ-Շիմ Դհոյի հետ,
- ՄԱԿ ԶՀԿ Գլխավոր քարտուղարի Զիմբաբվեի կառավարության կողմից առաջադրված թեկնածու պարոն Վալտեր Մզեմբիի հետ,
- ՄԱԿ ԶՀԿ «Մետաքսի ճանապարհ» ծրագրի ղեկավար Ալլա Պերեսոլովայի հետ:

ՄԱԿ ԶՀԿ Գլխավոր քարտուղարի թեկնածուի ընտրության նպատակով կազմակերպված փակ գաղտնի քվեարկության առաջին փուլում (Զիմբաբվե՝ 11 ձայն, Վրաստան՝ 8 ձայն, Բրազիլիա՝ 4 ձայն, Կորեա՝ 7 ձայն, Կոլումբիա՝ 3 ձայն) երկու առավելագույն ձայներ ստացած թեկնածուները՝ Զիմբաբվեի և Վրաստանի ներկայացուցիչներն անցան երկրորդ փուլ: Երկրորդ փուլում 18-ը 15-ի դիմաց ձայներով ՄԱԿ ԶՀԿ Գլխավոր քարտուղարի թեկնածու ընտրվեց Վրաստանի ներկայացուցիչ Զուրաբ Պոլոլիկաշվիլին: Զուրաբ Պոլոլիկաշվիլու թեկնածությունը կներկայացվի ՄԱԿ ԶՀԿ Գլխավոր ասամբլեայի հաստատմանը:

Հայկական պատվիրակությունը շնորհավորեց ՄԱԿ ԶՀԿ Գլխավոր քարտուղարի նորընտիր թեկնածուին և հրավիրեց Հայաստան՝ հետագա համագործակցության հնարավորությունները քննարկելու նպատակով:

ՄԱԿ ԶՀԿ Գլխավոր քարտուղարի մյուս թեկնածուների հետ փոխադարձ պատրաստակամություն հայտնվեց համագործակցության շարունակության, ամրապնդման ու զարգացման վերաբերյալ:

Նստաշրջանի օրակարգային հարցերից էր նաև ՄԱԿ ԶՀԿ աֆիլացված անդամների թեկնածուների ներկայացումը ՄԱԿ ԶՀԿ Գլխավոր ասամբլեայի հաստատմանը: Որպես թեկնածու ներկայացված էր նաև «Արցախի զբոսաշրջության զարգացման կազմակերպություն» հասարակական կազմակերպությունը: Այդ կապակցությամբ Ադրբեջանի մշակույթի և զբոսաշրջության նախարարությունը ՄԱԿ ԶՀԿ էր ներկայացրել բողոք- գրություն՝ ըստ էության քաղաքականացնելով հայկական կազմակերպության հայտը: Հայկական պատվիրակությունը, նախապես խորհրդակցելով ՀՀ ԱԳՆ հետ, նպատակ ունենալով թույլ չտալ հարցի հետագա քաղաքականացումը և անհարկի քննարկումը Գործադիր խորհրդի նստաշրջանի, առավել ևս հետագայում՝ Գլխավոր ասամբլեայի գալիք նստաշրջանի ընթացքում, նախնական պայմանավորվածություն էր ձեռք բերել ՄԱԿ ԶՀԿ պաշտոնատար անձանց հետ հայկական կազմակերպության թեկնածությունը հանել Գլխավոր ասամբլեա ներկայացվող ցանկից՝ առանց քննարկումների և առարկություններն ու հայտերը քննարկող հանձնաժողովի հաշվետվությունը Գլխավոր ասամբլեա ներկայացնելու որոշման: Սակայն, նստաշրջանի ընթացքում Ադրբեջանի ներկայացուցիչները ելույթ ունեցան «Արցախի զբոսաշրջության զարգացման կազմակերպություն» ՀԿ-ի ՄԱԿ ԶՀԿ աֆիլացված անդամության հայտի դեմ՝ փորձելով վերածել քաղաքականացված քննարկման: Հայկական պատվիրակությունն, իրավիճակից ելնելով, ելույթ ունեցավ՝ հայտարարելով, որ Հայաստանի Հանրապետությունում գրանցված հասարակական կազմակերպությունը սահմանված կարգին համապատասխան հայտ է ներկայացրել, սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ադրբեջանը հարցը քաղաքականացնում է, իսկ Հայաստանը միշտ ունեցել է և ունի ՄԱԿ ԶՀԿ-ն քաղաքական խնդիրների լուծման հարթակ չդարձնելու և ՄԱԿ ԶՀԿ օրակարգը չքաղաքականացնելու դիրքորոշում, ետ է վերցնում ՄԱԿ ԶՀԿ աֆիլացված անդամության հայտը: Այնուհետև, «Արցախի զբոսաշրջության զարգացման կազմակերպություն» ՀԿ-ն ևս նույն հայտարարությամբ գրություն է ուղարկել ՄԱԿ ԶՀԿ՝ ետ վերցնելով հայտը:

Գործադիր խորհուրդը որոշեց (կցվում է) հավանություն տալ հայտերը քննարկող հանձնաժողովի հաշվետվությանը և մինչև ՄԱԿ ԶՀԿ Գլխավոր ասամբլեայի կողմից հաստատվելը ՄԱԿ ԶՀԿ աֆիլացված անդամների ցանկում ժամանակավորապես ընդգրկել թվով 24 թեկնածուների՝ որոշման մեջ չներառելով դրույթ Ադրբեջանի առարկություններն ու հանձնաժողովի հաշվետվությունը Գլխավոր ասամբլեա ներկայացնելու վերաբերյալ: Հայկական կազմակերպությունը 24 թեկնածուների մեջ ներառված չէ:

ՄԱԿ ԶՀԿ «Մետաքսի ճանապարհ» ծրագրի ղեկավար Ալլա Պերեսոլովայի հետ հանդիպման ընթացքում քննարկվեցին Մետաքսի ճանապարհի շրջանակներում համագործակցության հետ կապված մի շարք հարցեր, այդ թվում նաև՝ Հայաստանում կազմակերպվող միջոցառումները ՄԱԿ ԶՀԿ պաշտոնական ինտերնետային կայքի Մետաքսի ճանապարհ բաժնում ներկայացնելու վերաբերյալ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հայկական պատվիրակության հրավերով պայմանավորվածություն է ձեռք բերվել ՄԱԿ ԶՀԿ նորընտիր Գլխավոր քարտուղարի թեկնածուի հետ Հայաստան այցելելու և հետագա համագործակցությունը քննարկելու վերաբերյալ:

8. Գործուղվողը՝

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահի առաջին տեղակալ՝ Մեխակ Ապրեսյան

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝

24 մայիսի, 2017թ.: